560

2004

280
1063-քր

3649

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3961

11219 1106-42

№ 560

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ

ԹԵՔԵԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ



Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ի Տպարանի Կուլիէլմոս Կրիֆիթի :

1842:

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տղայոց և պատանիներուն համար Հարց պատասխանիով պարզ ու աշխարհաբառ Քրիստոնէական վարդապետութիւն մը սկսած ենք տպել, որ Քրիստոնէութեան վերաբերեալ հարկաւոր նիւթերը դիւրութեամբ կըսորվեցունէ՝ և Սուրբ Գրքէն անթիւ վկայութիւններով լեցուն է, հիմա միայն անոր քանի մը դիւրալուր հարցմունքները՝ որնոր իր սկսելէն առաջ իր մէջը ունի, տպագրութեամբ կըհրատարակենք։ Եւ Աստուծոյ օգնութեամբը քիչ ատենէն կըլըմննայ, ու կըյուսանք որ ամէնուն ընդունելի պիտի ըլլայ և օգտակար. մանաւանդ ան բարեպաշտ ծնողացը՝ որ իրենց զաւկըները պըզտիկուց կրթել կըփափաքին Քրիստոնէական վարժութեամբ։

# Աղօթք Տէրունական ։

## Գրաբառ ։

Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն քո․ եկեսցէ արքայութիւն քո․ եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի․ զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր․ և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց․ և մի տանիր զմեզ 'ի փորձութիւն․ այլ փրկեա զմեզ 'ի չարէն․ զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն ։

## Աշխարհաբառ ։

Ո՛վ հայր մեր՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ ։ Քու թագաւորութիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ ։ Մեր ամէն աւուր հացը՝ այսօր մեզի տուր ։ Եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն ։ Եւ մեզ փորձութեան մի տանիր․ հապա՝ չարէն մեզ ազատէ, ինչու որ քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը, ու փառքը, յաւիտեանս, ամէն ։

---

# Հանգանակ Նիկիական ։

## Գրաբառ ։

Հաւատամք՝ 'ի մի Աստուած հայրն ամենակալ․ յարարիչն երկնի և երկրի․ երևելեաց և աներևութից ։ Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս Որդին Աս-

## Աշխարհաբառ ։

Կը հաւատանք մէկ Աստուծոյ ամենակալ Հօրը, երկինքին ու երկրի, երևցածներուն ու աներևոյթներուն Ստեղծողին ։ Եւ մէկ Տէրոջ Յիսուսի Քրիս-



խ

տուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ. լոյս ՚ի լուսոյ. Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ. Ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի. երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ ՚ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի, և զմիտ. և զամենայն որ ինչ է ՚ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւ-

տոսի Աստուծոյ Որդին. Հօր Աստուծմէ ծնած միածին. այսինքն Հօրը էութենէն: Աստուած Աստուծմէ. լոյս լուսէն. ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստուծմէ. Ծնունդ ու չէ թէ արարած: Նոյն ինքը Հօրը բնութենէն է, որ անով եղաւ ամէն բան երկինքին մէջ ու երկրի վրայ, երևցածները ու աներևոյթները: Որ ինքը մեզի մարդոց և մեր փրկութեանը համար՝ Երկինքէն իջած մարմնացաւ՝ մարդ եղաւ՝ Սուրբ կոյս Մարիամէն ծնաւ կատարելապէս՝ Սուրբ Հոգիով: Որով առաւ մարմին՝ հոգի՝ ու միտք՝ և ան ամէն հանգամանքները՝ որն որ մարդ մը ունի, ճշմարտապէս ու չէ թէ կարծիքով: Չարչարուած, խաչուած, թաղուած. իրեք օրէն ետքը յարութիւն առած. նոյն մարմինով երկինքը ելած՝ Հօրը աջ կողմը նստաւ: Նոյն մարմինովը ու Հօրը փառքովը գալու է կենդանիները ու մեռածները դատելու. ո-

ւատամք և 'ի Սուրբ Հոգին · յանեղն և 'ի կատարեալն ; Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս ։ Որ էջն 'ի յորդանան · քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ 'ի սուրբսն ։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի ։ 'Ի մի մկրտութիւն · յապաշխարութիւն · 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց ։ 'Ի յարութիւնն մեռելոց · 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց ։ Յարքայութիւնն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս ։

րուն թագաւորութիւնը վերջ չունի ։ Կըհաւատանք և անեղ ու կատարեալ Սուրբ Հոգիին · որ օրէնքներով և մարգարէներով ու Աւետարաններով խօսեցաւ ։ Որ Յորդանան գետը իջաւ , խրկված փրկիչը քարոզեց , ու սուրբերուն մէջը բնակեցաւ ։ Կըհաւատանք նաև մի միայն ընդհանրական ու առաքելական Եկեղեցիին · մէկ մկրտութիւնին , ապաշխարութիւնին , քաւութիւնին ու մեղքի թողութիւնին ։ Մեռելներուն յարութիւն առնելուն , հոգիներուն ու մարմիններուն յաւիտենական դատաստանին · Երկնից արքայութեանը ու յաւիտենական կեանքին ։

# ԴԻՒՐԱԼՈՒՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ

Հարց · Ո՞վ էր առաջին մարդը :
Պատասխ · Ադամ :
Հ · Ո՞վ էր առաջին կինը :
Պ · Եւայ :
Հ · Ի՞նչ էին իրենց երկու որդւոցը անուն-
ները :
Պ · Կայեն ու Աբէլ :
Հ · Ո՞վ էր ան չարը՝ որ իր եղբայրը մեռցուց :
Պ · Կայենը :
Հ · Առանց մեռնելու ո՞վ երկինքը համբարձաւ :
Պ · Ենովք :
Հ · Ամենէն շատ ապրող մարդը ո՞վ էր :
Պ · Մաթուսաղա :

---

Հ · Երբոր աշխարհքը ջրհեղեղաւ խեղդուեցաւ
նէ, որո՞նք էին Տապանով փրկուողները :
Պ · Նոյ ու իր ընտանիքը :
Հ · Իր իրեք զաւկըներուն անունները ի՞նչ
էին ·
Պ · Սէմ, Քամ, ու Յաբեթ :
Հ · Ո՞վ էր խիստ համբերող մարդը :
Պ · Յօբ Երանելին :
Հ · Ո՞վ էր Հայր հաւատացելոց :
Պ · Աբրահամ :
Հ · Երբոր Սոդոմ էրեցաւ նէ՝ որո՞նք փրկը-
վեցան :
Պ · Ղովտ ու իր երկու աղջիկները :
Հ · Ո՞վ էր՝ որ արձան աղի դարձաւ :
Պ · Ղովտին կնիկը :

Հ. Քանի՞ որդիք ունէր Յակոբ ։

Պ. Տասներկու ։

Հ. Ո՞վ ծախուեցաւ իր եղբայրներէն դէպ 'ի Եգիպտոս ։

Պ. Յովսէփ ։

---

Հ. Ո՞վ էր ամենահեզ մարդը ։

Պ. Մովսէս ։

Հ. Ո՞վ տարաւ Իսրայէլացոց որդիքը Աւետեաց երկիրը ։

Պ. Յեսու ։

Հ. Ո՞վ հրամայեց Արեգակին ու Լուսնին՝ որ կայնին ։

Պ. Յեսու ։

Հ. Ո՞վ էր խիստ ուժեղ մարդը ։

Պ. Սամփսոն ։

Հ. Աստուծոյ սրտին ուզածին պէս մարդը ո՞վ էր ։

Պ. Դաւիթ ։

Հ. Ո՞վ էր խիստ իմաստուն մարդը ։

Պ. Սողոմոն ։

Հ. Ո՞վ համբարձաւ Երկինքը հրեղէն կառքով ։

Պ. Եղիա ։

Հ. Ո՞վ երկաթ գործին լողալ տուաւ ։

Պ. Եղիսէ ։

Հ. Ո՞վ ձգուեցաւ Առիւծի գուբը ։

Պ. Դանիէլ ։

Հ. Որո՞նք էին ան իրեք տղաքը՝ որ հրեղէն հնոցը ձգուեցան ։

Պ. Սեդրաք, Միսաք, ու Աբեդնագով ։

---

Հ. Ո՞վ է Քրիստոսի կարապետը (խըլաւուզը :)
Պ. Յօհաննէս Մկրտիչը :
Հ. Ո՞րոնք էին, չորս Աւետարանիչները :
Պ. Մատթէոսը, Մարկոսը, Ղուկասը, ու Յօհաննէսը :
Հ. Ո՞վ էր մաքսաւորութեան մէջ նստողը :
Պ. Մատթէոս :
Հ. Ո՞վ էր Քրիստոսի սիրած աշակերտը :
Պ. Յօհաննէս :
Հ. Ո՞վ էր սիրելի բժիշկը :
Պ. Ղուկաս :
Հ. Ո՞վ էր Յիսուսի մայրը :
Պ. Կոյս Մարիամ:
Հ. Ո՞վ ուզեց մեռցունել Յիսուսը՝ երբոր ինքը պզտիկ տղայ մըն էր :
Պ. Հերովդէս Թագաւորը :
Հ. Ո՞վ Քրիստոսով մեռելներէն յարութիւն առաւ :
Պ. Ղազարոս :

ՀԱՆՐԱՅԻՆ
С.С.Р.А. Публичная Б
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հ. Ո՞վ մատնեց իր Տէրը
Պ. Յուդա :
Հ. Ո՞վ ուրացաւ իր Տէրը
Պ. Պետրոս :
Հ. Ո՞վ մեր Փրկիչը խաչվելու դատապարտեց:
Պ. Պոնտացի Պիղատոսը :
Հ. Ո՞րոնք էին սուտ մը զուրցելնուն համար մեռնողները :
Պ. Անանիան ու իր կնիկը Սափիրան :
Հ. Ո՞վ սպաննըվեցաւ սրով :
Պ. Յակոբոս :
Հ. Ո՞վ թաղվեցաւ՝ ու իրեք օրէն ետքը նորէն յարութիւն առաւ :
Պ. Յիսուս Քրիստոս :

